ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 31 >> << Դեկտեմբեր >> 2020թ. N ՎՊ/91-2020

Ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ մասով, 244.9-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 299-րդ հոդվածով, 305-րդ հոդվածի 1-ին և 8-րդ մասերով, <<Նվազագույն ամսական աշխատավարձի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 27-ի ՆՔՏՄ/13.2/3218-20 գրությամբ ներկայացված հողերի օգտագործման և պահպանման խախտումների վերաբերյալ N02 ակտը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝ հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքերի ինքնակամ փոփոխությունը չկանխելու համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհինգապատիկի չափով՝ մեկ հարյուր հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ.
2. Սահմանված տուգանքը վճարել տասնհինգօրյա ժամկետում պետական բյուջեի ՀՀ ՔՏՀԱՏՄ 900005001517 հաշվեհամարին և մուծման անդորրագիրը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարին (Գ. Ներսիսյան)՝ միջոցներ ձեռնարկել հայտնաբերված խախտումները վերացնելու՝ հողամասի օգտագործման նպատակային նշանակությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոփոխելու ուղղությամբ:

4. Սույն որոշման կատարման ընդհանուր հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Վ. Վարդազարյանին, իսկ որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Ա. Դարբինյանին:
5. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 73-րդ հոդվածով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով նախատեսված կարգով՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմին իրազեկելու հաջորդող օրվանից կամ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի պաշտոնական ինտերնատային կայքէջում հրապարակելու միջոցով:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Invalid signature

X

VERIFIED OCSP 3/31/2020 13:38:37 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230